

## Հուլիսյան վարժություններ 2

### 9. Վարժություններ կամ բայով

**կամ** (1եգ.անգ.կատ. կացի; հրամ. կա՛ց, կացե՛ք) չբ՝կանգնել, կանգնած լինել, հաստատուն մնալ; հաստատվել, տեղավորվել; լինել, գոյություն ունենալ; ապրել, որոշ ժամանակ մնալ; սպասել; կանգ առնել, դադարել, վերջանալ՝

**կացուցամ** եմ (1եգ.անգ.կատ. կացուցի; հրամ. կացո՛ւ) պբ՝կանգնեցնել; դնել, տեղավորել; նշանակել, կարգել; անել, իրագործել՝

• 1. «Եվ ասում է՝ մի՛ մոտեցիր [ցեղակից՝ հուն. μέγρι] այսր. քո **X**-ները [հրան. փոխառ., հմմտ. միջ. պարսկ. kafš + ածանց] արձակի՛ր/հանի՛ր [հնդեվր. \*leug-, ներկա միջածանցով՝ \*lu-n-g-] քո **Y**-երից [հնդեվր. \*pod-i-]. որովհետև (այդ) տեղը, որում կանգնած ես դու «դրանում», [ցեղակից՝ սանս. सुभ्र subhrá-] երկիր է»:

▶ և

• 2. Եւ յաճախ յակն «**X**-ի» [հուն. φρέαρ, սեռ. φρέατος n; գրթ. brunna] ի ներքոյ սարաբարձր մեհեհատեղոյն Հերակլայ, որ [կամ, 3եգ.սահմ.ներկա] դեմ յանդիման լերինս մեծի՝ որում Յուլն անուանեալ կարդան, ի բազնին տեղոջէ ի բացագոյն իբրև քարընգեց մի ի ներքոյ կուսէ, ի դոյզն ծործորակին ի սակաւ անտառակին ի **Y**-ուտ [հնդեվր. \*Hh<sub>3</sub>(e/o)sk-i(j)eh<sub>2</sub>-] պուրակին՝ որում անուն տեղոյն իսկ **Y**-ացն դրախտ [հնդեվր. \*g<sup>w</sup>ot-je-, 3հոգն.սահմ.ներկա]:

▶ Եւ

• Լրագուցիչ աշխատանք. Վերականգնե՛ք **X**-ի հնդեվրոպական նախաձևի ուղղական հոլովն ու թեք հոլովահիմքը:

▶ X

• 3. «Հարցրեց [ձևաբանական ճշգրիտ ցեղակից՝ սանս. अपृच्छत् aprcchat] նրանց, թե ո՞վ է այդ. և դուք ինչո՞ւ [հի՞մ] իջյալ կանգնած եք այդ [նախադաս] տեղում»:

▶ X

• 4. որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ: Չի յայնժամ դեռ ևս շէն «Էին/կային» [հնդեվր. \*trejes] բազինք «նրանում». առաջին՝ մեհեհան Վահեվանեան, երկրորդն՝ Ոսկեմօր Ոսկեծին «**X**-ի [հնդեվր. \*d<sup>h</sup>eh<sub>1</sub>s-, գրաբարում՝ անեգական]», և բազինն իսկ յայս [հուն. ὄνομα, -ατος n] անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր [սույնը]. և երրորդ՝ մեհեհան անուանեալ Աստղկան [սույնը], Սենեակ **Y**-ի [հրան. փոխառ., հմմտ. ավեստ. Vərəθrayna-] **Z**-ացեալ [հնդեվր. \*g<sup>w</sup>rH-d<sup>h</sup>h<sub>1</sub>-], որ է ըստ յունականին Ափրոդիտու:

▶ որ

• 5. հնքնուրույն աշխատանք.

Գրե՛ք հտրենացու գրառած վիպասանական այն պատառիկը, որտեղ գործածված է մեր բայի I ապառնին (եթե անգիր չէք հիշում, ապա գտե՛ք ու արտագրե՛ք), և թարգմանե՛ք արդի հայերեն:

▶ Ե

• 6. «Այս ասացին նրա **X**-ները [հնդեվր. \*g<sup>h</sup>en<sub>1</sub>-tleh<sub>2</sub>-], քանի որ վախենում էին [երկնչիմ չք] հրեաներից. քանզի <հրեաներից [սեռականով ենթակա] ուխտ էր **Y**-ված [հնդեվր. \*h<sub>1</sub>e- + \*d<sup>h</sup>eh<sub>1</sub>-] (հրեաները երգվել էին)>, որ եթե մեկը նրան քրիստոս խոստովանի [խոստովանեմ նք, -իմ հք], դուրս կարվի [ի բաց կամ, II ապառնի] ժողովարանից [ժողովուրդ, սեռ. ժողովրդեան]»:

▶ X

- 7. «Հեռու մնացեք [ի բաց + կամ] այդ տեղից»:  
▶ Ի

Հրաչ Մարտիրոսյան

29.07.2021, Leiden

[hrch.martirosyan@gmail.com](mailto:hrch.martirosyan@gmail.com)